

ՅՈՎԱԽԵՄԻՈՍ ԵՒ ԻՐ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ՅԵՐԿԻՐՆ ԵՐԱՆԵԼԵԱՅ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀԱՅԱԿԱՆ Հին գրականութիւնը թէ՛ պէտէ ազգային ուսումնասէրներէն երբեմն երբեմն իբրեւ ամուլ, միակողմանի և աղքատիկ պարսաւուած է անգիտակցաբար, սակայն յաճախ մրցակից կը հանդիսանայ օտարազգի գրականութիւններուն, և նոյն իսկ ևւրպացի գիտնականաց կարծիքով լաւագոյն ներկայացուցիչը կրցած է ըլլալ անյայտացած արտադրութիւններու, հետզհետէ յայտագործած իր անակնկալներով, ըլլան անոնք թարգմանութիւնք, ըլլան ինքնագիր յօրինուածներ, և այլոց ուղղող և վերակազմիչ հանդիսացած:

Ի վննետիկ, յէջմիածին և այլուր մինչև ցայսօր գրչագիրներու տարբերութիւններով և լուսարանութեամբք հրատարակուած նախնեաց գործերն արդէն իսկ յայտնի ապացոյց են ըսածիս և ուսումնասիրաց քաջածանօթ. հետեաբար հարկ չկայ միտո մի թուարկել զանոնք: Ահա այսպիսի, եթէ ոչ այնքան կարևոր, այլ անշուշտ հետաքրքրական անակնկալներէ մին՝ որ ցարդ կը մնայր անտիպ, պիտոր ըլլայ Չոսիմոս սեան Չրոյցը, որուն վրայ մեր նախնիք դրողմած են հետեանալ վերտառութիւնը. ՎԿԱՏԱՐԱՌՈՒԹԻՒՆ ՍՐՐՈՑՆ ՅՈՎԱԽԵՄԻՈՍԻ, ՅՈՐԺԱՄ ԽՈՐՀԵՑԱԻ ԵՐԹԱԼ ՅԵՐԿԻՐՆ ԵՐԱՆԵԼԵԱՅ:

Յովսեփոս կամ Յովսիմոս անուանա՛ ձեր միայն հայերէն խմբագրութեանց յատուկ է, և կը թուի ըլլալ Չոսիմոսի կամ Չոսիմոսի աղաւաղութիւն մը, թէպէտև այսպիսի աղաւաղութեան բուն պատճառը յայտնի չէ տակաւին. սակայն հաւանական է կարծել որ յառաջ եկած ըլլայ յունա-

րէն երկաթագիր Շ սկզբնատառին պատահական շփոթութենէ, և կամ ասորական զատե տառի ձայնափոխութիւն մը: Եւ իրօք վերջին ենթադրութեանս կողմանը կը թուի ընծայել մեզ ասորիէն թարգմանուած եթովպացերէն խմբագրութիւնն, ուր Ջ՝ Գ եղած է, այսինքն Չոսիմոսը՝ Գեթաւիմոս տառադարձուած:

Յովսեփոսի ծագման և կենաց մասին խիստ քիչ տեղեկութիւններ տուած են մեզ խմբագիրք, այն ալ անորոշ և իրարու հակասական: Ասորերէն թարգմանութեան մէջ գրուած է, թէ «Էր այր մի զարմաւայտի՛ անուն Չոսիմոս, բնակեալ յանապատի զամս քառասուն, և առանց ուտելոյ զհաց և ըմպելոյ զինի և տեսանելոյ զմարդ»։ Բայց չի նշանակել բնաւ ոչ ժամանակն և ոչ ալ անապատին անունը: Յունարէն Ա խմբագրութիւնն ունի «զայնոս ժամանակաւ», որ նոյնպէս անորոշ է, վասն զի համեմատութեան միւս եզրը լռուած է: Երով դարձեալ ժամանակը կը մնայ անորոշ, Հայերէն թարգմանութեան անթուական օրինակ մը, կամ լաւ ևս ընթորինակութիւն մը, — չգիտցուի թէ ինչ ձեռագրի վրայէն կատարուած, — կը յայտարարէ բացորոշակի թէ Չոսիմոսի 40 տարի բնակած անապատը կը կոչուէր Սկիւր (Սկիւտէ), ի հարկէ Եգիպտոսի. ըսելով. «Այր մի էր մեծատուն և անուն նորա Յովսիմոս, և բնակէր ի Լեթինե Սկիւր ամս. Խ.» են:

Ուստի նա 40 տարի այստեղ բնակելէն և ամենախիստ ճշնութենէն ետքն է որ կ'ուղկորի դէպ ի Երանելեաց երկիրն:

իսկ այս ուղեւորութեան վերջը կը տեսնուէր, — նոյն ինքն Յովսիմիոսի բերանը դրած հետեւեալ խօսքերով, — Թէ. «Յայնժամ զնացի ի դաշտն Երիբովի, ի պողոտայն առ կըր Յորդանանու, և շինեցի եկեղեցի մի և ժողովեցի եղբայրս խաթազնագեանս, և ի մօտն շինեցի տուն հիւրի և հանգստարան օտարաց, Եւ զնեցի էջ մի և յայնով բերէի ջուր ի Յորդանանու և արբուցանէի զնեղեալսն» ևն: Արդ՝ հայերէն Բ. օրինակի սոյն տեղովը ոչ միայն կը պարզուի յոյն և ասորի թարգմանութեանց «զայնու ժամանակաւ» անորոշ բացատրութիւնը, այլ և կը լրացուի ասոնց ամենակարեւոր պակասը. որով և յայտնի կ'ըլլայ մեզ Յովսեմիոսի (Զոսիմոսի) նախկին կեանքն և կենցաղը՝ նախ ի Սիւլիթ կամ Սկետէ լեռան վրայ՝ իբր մենակեցի, և ապա վերջին կենցաղն և գործունէութիւնը Յորդանանու եզերքը, որպէս շինարարի և առաջնորդի բազմաթողով ու խաթազնագեան եղբայր:

Այս այսպէս ըլլալով մեզի շատ հաւանական կերելի, թէ Յովսեմիոսս կամ Զոսիմոսն եղած ըլլայ նոյն ինքն Դ. Ե. դարուն այն մեծ ճգնողն և նշանագործ ծերունին, որ ծանօթ է Մարիամ Եգիպտացւոյ մահուան և թաղման, — գուցէ թէ և՛ դարձին — հետ ունեցած աղերսով և արտաշարծ արարուածով: Այդ, այս ապաշխարող կնկան ընդարձակ վարչագրութիւնը (տես Հարանց Վարդ Հտ. Ա. տպ. ի վննետիկ) կը հաստատէ մեր թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ դիտողութիւնը. զի կը գրէ նախ Զոսիմոսի մասին այսպէս. «Եղև ոմն ըստ Պաղեստինացւոց վանորէիցն վարուց և բանիւց զարդարեալ, որ առ ի նոցունց իսկ խանձարրոցն մոնղանականօցն սնանէր սովորութեամբ և իրօք. Զոսիմոս էր անուն ծերոյն: Բայց մի ոք անուանակոչութեամբ Զոսիմայ, որ երբեմն ի դաւանութիւնն ամբաստանեալ, այլափառ զսա կարծիցէ. քանզի այլ սա և այլ նա. և շատ ինչ է ընդ մէջ երկաքանչիւրոցն զանազանութիւն, թէպէտ և զմի ունին անուանակոչութիւն երկաքանչ

չիւրքն: Այսպէս և Զոսիմոս ուղղափառ միանձանց առ ի սքանչելի միումն ուրեմն ի վանն Պաղեստինացւոց ընդ ամենայն առաքինութիւնս որ զինչ և է անցանելով, և առ ամենայն ժուժկալութեան խորհուրդս եղեալ զիպող... Քանզի. ասի այս Զոսիմոս ուղղափառս առ ի նոյն ինքն մայրական ծոցոյ ի վանն զնա տալ, և մինչև յիսուն և երեք ամի զընթացս ճգնութեան ասնել... Զայստարկ ծերոյն զմտաւ ածեալ զօրինակ, ի վերայ ոմն եկաց ասնելով. Ո՛ր Զոսիմէ, աղեւտապէս ապա որպէս կարելի է մարդոյ, ճգնեցար, բարեբար և ճգնութեանց զընթացս արարեր, այլ մեծագոյն է ճգնութիւնն որ առաջի կայ քան զանցեղոցն. եյ յերկրէ քումմէ և յազգէ քումմէ. և եկ ի վանն որ մօտ ի Յորդանան զետ յարամացեալ»:

Այս կը նկարագրէ (յէջ 298-315) քանօրեայ ճանապարհաւ անոր ներքառագոյն առ նապատը երթալն՝ յայտնութեամբ հրեշտակին Աստուծոյ, Մարիամ Եգիպտացւոյն հանդիպիւն, զանի խոստովանեցնելն, կենարար մարմնոյն փրկատուի հաղորդելն և թաղելն, այլովք հանդերձ, Հուսկ ապա կը յիշատակէ Զոսիմոսի վերադարձը, ապրիւն և մահը՝ Վանական կոչուած վանքին մէջ, որուն արքայն էր Յովսեմիոս Վանականը, ըսելով. «Վախճանեցաւ և երանելին Զոսիմոս յայն վանս, հասնալ ի հարիւր տաւ»:

Արդ՝ եթէ Զոսիմոս իր 60-70 տարեկան հասակին մէջ տեսաւ զՄարիամ Եգիպտացի, որ զանի միշտ երանելի ծերունի կը կոչէ, ըսել է՝ թէ նա շատ աւելի տարեց էր քան զապաշխարող կիներ. իսկ որովհետև սորա մահը շուրջ 400-415ին եղած է, ուստի հաւանօրէն Զոսիմոս այս թուականէն 20-30 տարի յառաջ կատարած ըլլալու է իր ուղեւորութիւնն յԵրանելաց կղզին, — եթէ իրօք այնպիսի ուղեւորութիւն մը տեղի ունեցած է երբեք: Ոմանք դիտելով որ Մարիամ Եգիպտացւոյ վարքագրութեան հեղինակն, այսինքն Երուսաղէմի պատրիարքը Սփորոնիմոս, Յուստինոս Ա. կայսեր ժամանակակից

էր, այն է յամի Տեառն 515, ուզեցին հզորակացնել թէ ապա ուրեմն ինչպէս Մ. Եգիպտացի, այսպէս ալ անոր հետ պատմական սերտ աղերս ունեցող Զոսիմոսը՝ Զ. դարուն ապրած ըլլալու են։ Սակայն այս ենթադրութիւնս ուղիղ չէ. որովհետեւ Սոփրոսիմոս ինքնին իրմէ շատ աւելի հին կը յայտարարէ յիշեալ անձինքը և անգիր աւանդութենէ ծանօթ, ըսելով. «Իսկ ես զոր էր պէտս անկատարարս (անգրաւորաբար) ընկալայ, զնոյն գրաւորապէս զեկուցիւ թերեւ և ոչք զվարս սրբառնոյն գրատրուականցին ամենայն իրօք վայելականացոյնք քան զիս և ի քարձրագոյնք, թէպէտ և այսպիսի ինչ յիս գիտութիւն ոչ եհաս ։։։ Ուստի յետ ժամանակաց և յաւանդութենէ գրեց նա անոնց պատմութիւնը. և հետեալ րար ժամանակակցի մը համար խիստ անյարմար են այսպիսի քացատութիւններ։

Երանեալ Յովսեփոսի և համբաւաւոր ճգնողին կեանքը չափով մը լուսաբանելէն ետքը, այժմ հետեւեալ հարցերը կ'եւնեն մեզ ընդառաջ. Ա. Արդեօք այլաբանական ուղեորութեանս նկարագիրը տիրապէս ի՞ր ձեռքովը գրուած է, թէ ի՞ր աշակերտներէն և կամ յետագայից մէկը։ Բ. Թէ ո՞ր թուականին գրուած կամ յերկրեալ է և թէ որպիսի և ո՞րչափ աղբիւրներու վրայ։ Գ. Թէ ինչ բարոյական կամ գրական ազդեցութիւն ունեցաւ այդ գրուածը կամ Զրոյցը յետագաներուն վրայ։

Առաջին հարցման նկատմամբ՝ դիտել կուտանք որ, իրմէ բերանացի կերպով պատմուած լինելն անկարելի է, եթէ ի նկատ

առնունք յատկապէս գրութեանս վերջաբանը, ուր Զոսիմոսի մահը և թաղումը գրեթէ բոլոր թարգմանութեանց, և մասնաւորապէս յունարէնի մէջ յիշատակուած է՝ յետշիրմեան աչքի զարնող պարագաներով՝ Արդ՝ դիտելով որ Կրիստոսի իբր ականատես և կենակից ոմն կը գրէ ծանօթագրուած տողերը, կը հետեւի ուրեմն որ նա Զոսիմոսի մահուանէն քիչ ետքը ի գրի առած ըլլայ Զոսիմոսեան Զրոյցը, եթէ այդ վերջաբանը յոյն թարգմանչէն ետքը ներմուծուած ու կեղծիք մը չէ՝։ Իսկ հակառակ պարագայից մէջ ոչ միայն զարմանք չէ, այլ նոյն իսկ շատ հաւանական որ Յովսիմոս իր մահուանէն 40-50 տարի իսկ առաջ, այսինքն՝ Երանելեաց երկիրը (իմա՛ Կանաբեան կղզին) ճանապարհորդելէն անմիջապէս ետքը անձամբ գրած, և իբր բարոյավէպ թողած ըլլայ Յորդանանու անապատներուն և ապառներու մէջ բնակող բերաւոր միանձանց և միաբանակեցաց, որպէս օրինակ ուղղութեան, Վերջը պիտի ջանանք ցուցնել, թէ Զրոցիս նախնական աղբիւրն եղած է հրաւայեցերէն, և թէ այդ աղբիւրը մասամբ պատմական տուեալներու վրայ հաստատուած էր, որոնք ոչ միայն սեմական ժողովուրդներուն քաջածանօթ էին, այլ նաև սուրբ Գիրքը ի սուր և ի գիշերի որոճացող մեկնիչներուն և ճգնաւորներուն։

Զրոցիս պատմական նիւթը կազմողն էին իսրայէի Աստուծոյն հաւատարիմ Թաւցոյ Ռեքարայ որդւոյն Յոնադարայ սերունդքն, որոնք հաւանօրէն մասն կը կազմէին Նարոգոզոնոսորէն գերի տարուած և

1. Ուր, այսինքն ի՞նչ օգնում կը գրէ Կրիստոսի մէջ այսպէս. «Έγώ δὲ ἢ Κρύσεως †, εἰς ὧν τῶν ἐν τῇ ἐρήμῳ, ἑκβαλὼν ἑδωκα πᾶσιν τοῖς θέλουσιν μανθάνειν καὶ ὠφελεῖσθαι. οἱ οὖν ἀγγελοὶ τοῦ Θεοῦ συνεκόμισαν τὸ σῶμα τοῦ ἀγίου Ζωσίμου ὡς πολύτιμον θῶρον, καὶ ἑθεασάμεμεθα τὴν ψυχὴν τοῦ μακαρίου ὑπὲρ τὸν ἥλιον πεφωτισμένον ἐπταπλασίως ἀνέβησαν δὲ ἐπὶ τὸν τόπον παφχαρρίμα φοίνικας ἐπτά, καὶ ἑπεσοικαὶσαν

τὸ σπήλαιον» ἀνέβη δὲ καὶ πηγῇ ὕδατος ἑπὶ τοῦ τόπου ἐκείνου, ὕδωρ ἄγιον, καὶ ἔως τῆς ἡμέρας ταύτης ἰσως καὶ σωτηρία πούτων τῶν προσερχομένων ἀσθενῶν εἰρήνῃ πᾶσιν τοῖς ἀκαούστοις τῇ μνημῆν τοῦ ἀγίου Ζωσίμου».

2. Եւ իրօք կեղծիք ըլլալու նշանն այն է, որ վերի ծանօթագրութեան նեթագծուած տողերը Զրոցիս միւս թարգմանութիւնները չունին՝ Կրիստոսի անունով հանգիստ, այլ վերջին մասը միայն.

Եփրատայ ափունքը, կամ լաւ եւ Գովգա-
նայ հովիտը շրջապատող լեռնաշղթային
վրայ հաստատուած ինն եւ կէս ցեղին. եւ
կամ ձինապատ եւ ամպածրար Հերմոն
լեռան վրայ բնակող ճշանաւոր Հնասեան-
ներուն, ուր ապականած էին հաւանօրէն՝ թէ՛
Երեմիա մարգարէի Երուսաղէմի վրայ ը-
րած տխուր գուշակութենէն եւ թէ՛ Սեղե-
կիա ամպարիշտ Թագաւորի սպառնալիք-
ներէն բռնադատուած, թողուցեր լքեր էին
Երուսաղէմ եւ Հրէաստանը, մովսիրական
օրէնքն ու ճշմարիտ աստուածապաշտու-
թիւնը անարատ պահպանելու եւ սրբանա-
լու համար:

Սակայն Յովսեփոս կամ Ջոսիմոս գու-
շակելով որ հին օրինօք ապրող Ռեքա-
բաններուն, եւ կամ Հնասեան ճցնող ու
երկնակենցաղ իմաստասիրաց օրինակն
այնչափ ազդու եւ խօսուն չպիտի ըլլայ
Գ. դարուն ապրող ըրիտոսապաշտ մու-
նողներուն, անոր համար ալ զիմեց նա
ուրիշ հնարիմացութեան մը, այսինքն ցուց-
նել անոնց, թէ ինչ որ մարդկօրէն անկա-
րելի էր իր պէս զատումաւ ձերու մը, ինքն
աստուածային յայտնութենէն ազդուելով
եւ հրաշագործութեամբ կտրած անցած
էր անծանօթ անապատները՝ օգտուելով
առիւծաբաշ ուղտի՝ եւ թռչուն սուրհան-
դակի գործակցութենէն, որոնք զիւրաւ
եւ անփնա կը փոխադրէին զինքը մերթ
բերապատիկ հրէշներու, թիւնաւոր օձե-
րու եւ անարկու գազաններու մէջէն, եւ
մերթ ալ անուշարոյր եւ ծաղկաւետ բոյ-
սերով եւ ամենազան պտուղներով լի վայ-
րերէն: Իսկ ծովերն ու գետերը՝ մերթ ա-
նոնց երկու ափանցը վրայ ուռճացած ու
խորհրդաւոր երկու ծառերու շնորհիւ, ու-
րոնք տարին միանգամ (իմա յիշողկապար-
զին օրը) խոնարհուելով՝ իրարու կը մօտե-
նային եւ կը համբուրուէին՝ իբրաւ աւան-
դելով եկաւորը: Եւ այս կերպով տե-
սած եւ լսած էր ունայն աշխարհէն զա-
տուած, աւետարանի լուսով պայծառացած
ու հրեշտակական վարուք կատարելագոր-
ծուած Երանելեաց երկրի այն հարիւրա-
մեայ ծերունիները եւ հիացած, ինչպէս

Մեծն Մակար ալ Յանէսի եւ Յամբէսի
զրախտը տեսնելու ջերմ փափաքով, մա-
նաւանդ թէ դիւաց գաղտնիքը իմանալու եւ
փորձութիւնները վեր հանելու նպատակով
ամսօրեայ ճանապարհագնացութեամբ եւ
անսուղ կտրեր անցիր էր անծանօթ ա-
նապատներ:

Այն այսպիսի հրապուրիչ պարագանե-
րով, նա՛ մանաւանդ Ռեքաբանց անմեղ
ու երջանիկ կենաց շքեղ եւ ճարտար նկա-
րագրով, Յովսիրոսեան Ջրոյցը կամ ճա-
նապարհագրութիւնն ի կղզիա Երանելեաց,
— թէպէտ եւ ըստ ինքեան աւելի այլաբանա-
կան քան իրական, թէպէտ եւ սոսկապէս
մտաւորական յափշտակութեան մը՝ քան
թէ իրական պատմութեան բնոյթ ունե-
նալ իր թուի: Սակայն եւ այնպէս անոր
հեղինակը սխալած չէր իր ձեռնարկին
մէջ, մանաւանդ թէ հասած իսկ լիովին իր
նպատակին. վասն զի ո՛չ միայն այն ժա-
մանակի դիւրահաւատ միանձուներն եւ վա-
նականները, որոնք լեցուցեր էին Պաղես-
տինու եւ Եփրատոսի անապատները, այլ
եւ Արքեպատրիարք այլաբանական դպրոցին
հետեւող հետտորներն եւ մատենագիրք իսկ՝
առանց երկրայութեան եւ հաճոյքով ող-
ջուցեցին այդ ճանապարհագրութիւնը իբր
ստուգիւ կատարուած եղելութիւն, այլ եւ
թարգմանուեցաւ այն այլեւայլ լեզուներ-
ւով: Եւ հետզհետէ յաճախեցին նորանոր
խմբագրութիւններ եւ, յաւելուածներով
եւ փոփոխութիւններով, օրինակուեցան եւ
սփռեցան ի սփիւռս բազմաթիւ օրինակ-
ներ, ինչպէս հին աշխարհի եւ աշխարհէն
դուրս ապրող մոնղոլներուն եղաւ անոր
ընթերցումը՝ որպէս զօրեղ խթան ողջա-
խոհ կենաց եւ առաքինութեան, այսպէս
ալ նոր աշխարհի արկածախնդիրներուն
համար պիտի դառնար անի նիւթ վտան-
գաւոր արշաւանքներու եւ ողբերգական
դէպքերու եւ վէպերու:

1. Եւ որովհետեւ այդ երանելի երկիրը առանց յա-
տուկ անուան մը նկարագրուած էր, ուստի ոմանք կա-
նաբան եւ այլք իկարեան կղզիներուն հետ նոյնացուցին

Այսպիսի յաջող ընդունելութեան և տարածման պատճառ եղան, ըստ իս, նախ և առաջ կեանքը զբիթէ բովանդակապէս անապատի մէջ անցնող խորհրդապաշտ ճգնողին, հոգեւտեսի և բարեկարգութեանց հեղինակ Հոր Յովսէփոսի, ինչպէս նաև անոր անունն և համարաւր՝ որ տարածուած էր Պաղեստինի և շրջակայ երկիրներում:

Եւ այս բանիս ապացոյցը տուած է նոյն իսկ Երուսաղէմի գիտնական պատուիրարը՝ Սոփրոնիմոս, Մարիամ Եգիպտացւոյ վարքագրութեան մէջ, ի հանդէս բերելով նախ շրջի փուլերով, Զոսիմոսի մեծութիւնը՝ Երկրորդ՝ Երեմեայ մարգարէութեան լի. գլուխը և Ա. Մնացորդաց, ուր կը շեշտուին Ռեքարեան Յովնադարայ որդւոց կատարեալ պատուիրանապահութիւնն և ժուժկալութիւնը այլովը հանդերձ, և որը կը կազմէր զոսիմոսեան Զրուցի կորիզը: Երրորդ՝ այն դարերում ապրող հաւատացեալներու դիրքահաւատութիւնը այն ամէն բանի, որ բարեպաշտական էր և Ս. Գրքէն տեղիքներ կը պարունակէր. այնու մանաւանդ որ բարոյականի դէմ չըլլալէն զատ՝ կրօնաւորական եռանդն ևս մեծապէս տածելու և արծարծելու կը ծառայէր: Եւ այսպիսի դիրքահաւանութեան փայլուն օրինակ են ոչ միայն Հարանց Վարքի մէջ մտած պէսպէս կեղծ պատմութեան և հրաշք, այլ նոյն իսկ Ն. Կոտակարանի անվաւեր գրութեան և Թարմատար վկայարանութիւնները՝ լի չափազանցութիւններով, զորոնք սրբագրելու հետ են այսօր Յաճնաժողովը և ըննասէրք:

Արդ՝ եթէ մենք ալ ըննական ակնարկ մը ձգենք Զոսիմոսեան Զրուցի վրայ, պիտի տեսնենք, թէ կան պարագաներ՝ որք կասականելի կ'ընեն անոր վաւերականութիւնը.

այսինքն ըստ երբայական սկզբնաղբին ինն և կէս ցեղից բռնի տարագրութիւնը Նարեգոդոնոսորէն՝ աստուածապղծիկ ու կամաւոր աստճեկոտրեան փոխուած է. յայն կոյս Պարսիցը՝ յայնկոյս Եգիպտոսի. Եգիպտոս գետը՝ մերթ Նեղոսի և մերթ Ովկիանոս. Գովգանայ հովիտը՝ Երանելեաց երկրի (և կամ իկարեան կղզիին), և զանի շրջապատող լեռնաշղթայն ալ ամպեղէն պարսպի. Մովսիսական օրինոց ապրող ընտրեալները՝ տեսակ մը քրիստոնեաներու. ողջախոհ և սուրբ ամուսնութիւնը, — իմս յետ առաջնոյ զուգաւորութեան, — ամուրի կենաց կամ կոտորեալ, որը արհամարուած էր Հրէից մէջ. անոնց մերկութիւնը՝ յոսեղեկ գգնտի, և մարդկային կենցաղը՝ հրեշտակականի, և դեռ ուրիշ շատ պարագաները՝ որոնք գէթ մասամբ այլ և այլ Թարգմանութեանց կամ խմբագրութիւններու իսկ յատուկ կարող են ըլլալ, և ես չեմ ուզեր հոս անոնց վրայ ծանրանալ. վասն զի Բ. Նոստրերէն Թարգմանութեան հրատարակութեան ներածութեան մէջ արդէն իսկ մատնանշած է.

Կանուխէն ըսինք որ ի վաղուց հետէ զանազան լեզուներով Թարգմանեցաւ Զոսիմոսեան Զրուցը, և յոյժ հրապուրիչ ըլլալով՝ տպագրութեամբ ևս լոյս տեսան անոնցմէ ոմանք և ծանօթացան Երուսաղէմ, և իայց որովհետեւ թէ՛ աղոնք և թէ՛ հայերէնը դեռ յայտնի չեն մերայոց. ուստի կարևոր կը համարիմ անոնց մասին համառօտ տեղեկութիւն մը տալ հոս ի վաղ ժամանակաց կատարուած Թարգմանութիւններէն՝ վեցը միայն ծանօթ են ինձ:

1. Գունարէնը — Թարգմանութիւններէն հնազոյնն է, — հրատարակած է Էմիլիտա Ռորինսըն՝ Պարիզի Թիւ 12192 Զեռագրին (գրուած ժի. դարուն) և Բողլէյան

և մինչև հոն ձգեցին իրենց արշաւանքները հոգովաբար նաւերով: Այսպիսի են օրինակի աղագուս «Voyage en Icarie par Cabot 1840. — Les rois sans couronne, 1 vol. par le Baron Marc de Villiers du Terrage, chez Perrin, ուր նկարագրուած են Բէթէն, կուրէն (իկարեան Թագաւոր) սկեռալ՝ մինչև շարդէն Հիկթէ, երևակայաւ աշխարհականներու, արկածախնդ.

դիրներու և Սամարայի կայսեր արարուածները. որոց մանրամասնութիւնք տես Temps լրագրի Juin 13, 1906. N. 16428.

1. Text and Studies, contributions to Bibl. and Patristic Litteratur, Vol. II. N. 3, Cambridge, 1893, p. 96-108.

Թիւ 19 (գրեալ ԺԵ-ԺԶ դարու) Զեռագրի վրայէն: Առաջինը, A, կը կրէ սոյն խո-
րագիրը: Διήγησις Ζωσίμου εἰς τὸν βίον
τῶν μακάρων. Իսկ երկրորդ օրինակը, B,
ունի Λόγος τῶν ἁγίων μακαρίων του οσίου
πάτρός ἡμῶν Ζωσίμου εὐλόγησον. Թարգ-
մանութիւնս երբայական սկզբնագրին վրայ
կատարուած է, որուն սակայն ինչ սեռի
գրութիւն և ինչպիսի՝ բովանդակութեամբ
ըլլալը լաւ յայտնի չէ, հետեւաբար անոր
վրայ ունեցած եւրոպացի գիտնականաց
կարծիքներն ալ իրարմէ տարածայն և
անորոշ:

2. Ասորերէն թարգմանութիւնը, զոր
առաջին անգամ ի լոյս ընծայեց ֆրան-
սացի գիտնականը Փ. Դօ¹, հանդերձ նե-
րածութեամբ և ֆրանսերէն թարգմանու-
թեամբ: Հրատարակիչս՝ հիմն դնելով Պա-
րիզի Ազգային Գրատան Թիւ 236 հնա-
գոյն Զեռագիրը, ի զորմ անքէն է նաև Թիւ
235, 234, 1214 ասորերէն պապասաւոր
Զեռագիրներն, նշանակելով անոնց տար-
բերակներն ի ստորոտ բնագրին: Զեռա-
գիրներէս առաջին երկուքը գրուած են
ԺԲ. դարուն, իսկ միւսներն ԺԳ. ին.
Թարգմանութիւնս կատարուած է Թակոբ
Եղեւսացւոյ ձեռքով Է. դարուն և յունա-
րէնի վրայէն: Ասորերէն թարգմանութիւնն
ունի մեծ տարբերութիւններ յոյնէն, մերթ
յաւելուածներով և մերթ յապաւումներով,
որոնք մասամբ, յայտնի կը տեսնուի, թէ
Թ. Եղեւսացիէն ներմուծուած են. մաս մ'ալ
երբայական քնագրի յայնժամու դեռ ծա-
նօթ խմբագրի մը արդիւնք համարելի:

3. Եթովպական թարգմանութիւնը կամ
խմբագրութիւնը, զոր կը ներկայացնեն
մեզ ըստ Վրայթի² Բրիթիշ Մուզէումի Թիւ
381, N. 4 եթովպացերէն Զեռագիրն և

Թիւ 146, N. 6 Զեռ. Ազգ. Գրատան ի
Պարիզ, ըստ Յոտէնբերգի³ յոյժ ընտիր,
կը կրէ հետեւեալ խորագիրը: Պատմութիւն
մը հոգեւունչ արտնք որք յաւաքս Երեմիայ
մարգարէի, որ կը յիշեցնէ ինձ Էրեմ. Գլ.
I. Ե. 10-19 համարները: Թմբագրութեանս
պարունակութիւնէն դատելով, զոր կու տայ
Էրմ. Ռորինսըն՝ ըստ վերլուծութեան Յո-
տէնբերգի, շատ կը տարբերի նախընթաց
երկու թարգմանութիւններէն. այսինքն
ձեւացած է հետեւեալ անվաւեր գրուածոց
վրայ, որպիսիք են Կոստուած ցեղերու Պատ-
մութիւնը, Վիէ (Confit) Աղամայ, Վիպու-
սանութիւն Աղիքսանդրի⁴ (եթովպացերէն),
և Մեհացորդը բանիցն Բարաքայ:

4. Արաբերէն թարգմանութիւն մ'ալ
կայ Զրուցիս, որուն օրինակները կը գրա-
նուին ի Պարիզ (Ane. fonds 170.171.
Supplements 91, 92, 93), որ խմբա-
գրուած է եթովպականին վրայ, բայց գոր-
ծածելով ուրիշ աղբիւրներ ևս: Էրմ. Ռո-
րինսընի կարծիքով թարգմանութիւնս սերտ
աղերս ունենալու է եթովպական երկու
անվաւեր գրուածոց հետ, այսինքն են մին
Պայքար Մատրեոսի⁵ եթովպացերէն, թարգ-
մանուած Մաւանի ձեռքով: Իսկ միւսն
Յայտնութիւն Պետրոսի, զոր ինքն ուսում-
նասիրած է այլուր: Եւ այս բանս ապա-
ցուցանելու համար կը ներկայացնէ մեզ
կրկին քաղուածներ, իրարմէ մեծապէս
տարբերող երկու զրգրէն, որոնք սակայն
իրարու հետ մեծ նմանութիւն ունին և Կո-
ստուած ցեղերու պատմութենէ մը կը յա-
ռաջացային. և թէ քաղուածներէս մին
վերոյիշեալ Պայքար Մատրեոսի եթովպա-
րէն թարգմեան մէջ պահուած է, իսկ միւսը
կոմպոզիտնու քերթուածներուն:

5. Է սլաւոնական թարգմանութիւնը,

1. S⁴⁰ F. Nau, Les Fils de Yonadab Fils de Réchab, et les îles Fortunées, Paris, 1899. Իսկ
Զոսիման Զրուցը կը կրէ, — ըստ ֆրանսերէն թարգմա-
նութեան, — սոյն վերնագիրը. Histoire des fils de
Jonadab, fils de Réchab, qui demeurent dans la
grande mer l'Océan. Dieu montra au bon moine
Zosime.

2. Wrigt's Catalogue of the Ethiopic Mss. in
the Brit. Mus. Cod. 381, n. 4.

3. Zotenberg, Cat. der Ethiopischen Mss. in
der Nat. Bibliothek. cod. 146, n. 6.

4. S⁴⁰ Der Ethiopische Roman des Alexanders,
Zotenberg, Cat. Mss. Eth. p. 244.

5. S⁴⁰ Conflicts of the Holy Apostles p. 44.

որ կը գտնուի սլաւոնական անվաներ մասնակցութեան ձեռագիրն օրինակի մը մէջ եթէ չեմ սխալիր ի Մոսկուա, և նշանակուած է Ms. Synod. 290, n^o. 14, ըստ Մատթէի և Ֆրայքիցիուսի¹։ Որոյ որպիսութեան մասին համառոտ տեղեկութիւններ կու տայ կողակ իր սլաւոնական անվաներ զորոց սքանչելի Ֆուցակին² մէջ, այսպէս նաև Տիխէնրաւով և Վեսելովսկի³ խօսած են արդէն անոր պարունակութեան մասին։ Այս Զեռագրիս մէջ (N. X liv) կը գտնուի Զոսիմոսի Զրոյցը, սոյն տիտղոսով. *Peregrinatio Zosimae ad Brachmanos*. Զանապարհորդագրութիւնս նոյնպէս կը կատարուի հրեշտակի մը առաջնորդութեամբ երջանիկ յերկիրն Պրահմանից, — ուր քիչ ժամանակ ինքը կ'ապրի, — և կը զբաղի սառնց անսովոր կենաց և կենցաղի նկարագրութեամբ։ Յետոյ կը դառնայ Զոսիմոս, դարձեալ հրեշտակի օգնութեամբ, իր քալայրը, և իր մահուանէն քիչ առաջ կը յանձնէ իր աշակերտներուն Պրահմաներու նկարագրութիւնը։ Էր. Ռոբինսոն կը յարէ թէ, մի և նոյն Ֆուցակին մէջ պէտք է որ գտնուի ծանօթագրութիւն մը նմանօրինակ յիշատակարանի մը, որուն դիւցազն է Ագաբետոս, Սլաւոնականը նոյն ըլլալ կը թուի յունարէնին հետ, — ի բաց առեալ տարբերակները, որոցմէ մին է խորագրի Պրահմանաց, փոխանակ յուն. Μαχαριτων։

6. Հայերէն թարգմանութեան, — որ ցորդ անծանօթ մնացած է ոչ միայն եւրոպացի գիտնականաց, այլ և մերայնոց, — կրկին խմբագրութիւններ ունինք ի ձեռին։ Մին համառօտ, որ կը գտնուի մեր զբաղման փէ. խմբագիրին կամ տուփին մէջ, ընդօրինակուած է՝ նոր շղագրով՝ յաղաւաղ օրինակէ Միլըզայեան՝ ի Մարսիլիա՝, անվարժ գրչէ մը, և կը սկսի առանց խորագրի. «Այր մի էր մեծա-

տուն և անուն նորա Յովսիմոս, և բնակէր ի յերիկն Սկիաթ ամս Խ. Բայց ոչ էր ճաշակեալ հաց և ոչ մտեալ ընդ յարկաւ, այլ խոտ ուտէր որպէս զանասուն և հանապաղ օրհնէր զաստուած, և փութայր ի սրտի իւրով տեսանել զերկիրն երանելեաց»։ Իսկ միւսն ընդարձակ, այսինքն համառօտին կրկինն է, և զբեթէ բուրովին աննման, իրկուքն ևս իրենց տեսակին մէջ խիստ հետաքրքրական են։ Առաջինը թէպէտ և յունարէն և ասորիւն, բնէ թարգմանութիւններէն աւելի սեւոր, թէպէտև համեմատաբար նոր⁴, սակայն անոնցմէ աւելի հաւատարիմ մնացած է, ըստ իս հին սկզբնագրին, դիտելով որ զեբծ է քրիստոնէական նկարագիր ունեցող անոնց յաւելուածներէն, նա մանաւանդ իրրև փորձաքար պիտի ծառայէ անոնց մերթ իրարու հետ ունեցած աւելի կամ պակաս մեկուսացումին և մերթ մերձեցման։

Իսկ վերջինը, կամ լաւ ևս ընդարձակ, որ իր վրայ կրած վերնագրին. «Վկայաբանութիւն օրոյն Յովսիմիոսի» են, նայելով՝ կենսագրականի մը կրճատութիւնը կրկնելով կուտայ յայտնապէս. շարքա-նութեամբ շատ աւելի կոկ է, ի հարկէ ի բաց առեալ ինչ ինչ աղաւաղումները, որոնք մասամբ անվարժ ընդօրինակողին և մասամբ ալ հին երկաթագրի դժուարութեան ըլլալուն կամ եղծման հետեւանք համարելի են անտարակոյս, — վերջին աստիճանի հետաքրքրական է և օգտակար՝ իր պարունակութեան և նորութեանց համար, որոնք միւս թարգմանութեանց ոչ միոյն մէջ կը գտնուին։ Խմբագրութիւնս կը սկսի Յովսիմիոսի առ Աստուած ուղղեալ աղօթքով, այսպէս։ «Տէր աստուած ամենակալ, առաջնորդեայ ինձ ի ճանապարհի քում, և զնացից ի ճշմարտութեան քում, ևն։ Ապա յուզի անկեալ հետեի-

1. Bibl. Gr. XI, 724, ed. Harles.

2. Jahrb. f. Prot. Theol. XVIII. 158.

3. Journal des Ministeriums für Volksaufklärung, Juni 1884. pp. 158-164.

4. Եւ իրօց լեզուէն դառնով կ'ան ասոր մէջ յամփօւրէն կամ աշխարհիկ լեզուով աշնպիսի բաներ և առումներ, որոնք կը պակսին թէ միջնագրեան դասական մասնագրաց քով և թէ՛ բառարաններում։

ճանապարհին, ցանկանալով հասանել առաքինի վարիւք յերկիրն պարգեաց» : Հոգին սուրբ երևնալով անոր ի տեսնան՝ կը արտապնդէ զինքը չերկնչել ճանապարհի դժուարութիւններէն, ըսելով. « Ահա ես առաջորդեմ զեզ՝ կատարելով զուխտ քո» :

Եւ Յովսիմիոսի ճանապարհորդութեան իբր անաշխի կայան, յիշուած է Աթէնք՝ առ եզր գետոյն, կամ քաղաքէն դուրս. ուր կը հանդիպի Վարձկանի մը (Բ. օր. հռ. վիւի) : Հոս կը սկսի այլարանական երկայն ճրամախօսութիւն մը, առեղծուածային հարց ու պատասխաններով, երկուքին միջև. որ իր հակիրճ ու ճշուրն ասացուածներով և նրբատես լուծութիւններով՝ խոր հնութիւն ունեցող յունական աղբիւրի մը, և կամ գուցէ թէ Հովիւ Հէրմասի նոյնատեսակ, բայց անյայտացած գրութեան մը մնացորդն ըլլայ, իթէ կեղծուած չէ : Ճրամախօսութենէն ետքը վարձկանը հիացած Յովսիմիոսի իմաստութեան վրայ, ծունր կը դնէ անոր առջև և օրհնութիւնը կը խնդրէ : Յովսիմիոս ալ իր կողմէն կը խնդրէ անկէ որպէս զի քարեքարոյ մէկը ցուցնէ իրեն քաղաքին մէջը, որուն քով կարենայ իջեանալ : Առ որ կը պատասխանէ վարձկանը. « Տէր, յորժամ ի քաղաքն դիմես, յառաջին փողոցն տեսանես աշտարակ մի բարձր և գեղեցիկ, անդ տեսանես այր մի քոսի և գեղեցիկպատկեր. Ամբակոսմ կոյի անուն նորա » : Եւ Ամբակոսմը տեսնելով զՅովսիմիոս՝ փող առն տեսց կը հարկանէ առ ամենեսեան և կը կոչէ զամէնքը ըսելով. « Ուրախ լըրուք ընդ իս ամենայն բնակիչք քաղաքիս Աթենացուց, զի գտի զայլոն աստուծոյ : Գորկախառնուած կը համբուրէ, կը մտցնէ զանի ի տաճար ի սենեակէն արքունական, զննելով առաջի նորա « հաց երկնարեկ և բաժակ հրեշտակատու » :

Հոս կը բանայ խմբագրութիւնս ուրիշ գրուած մ'ես ոչ ինչ նուազ շահագրգիռ քան զառաջինը, այսինքն՝ հրաման կը զրկուի առ ամենայն վարդապետսն Հռոմայ թագաւորութեան, և կը ժողովին առհասարակ ամենայն գիտնականք. որոնց

մէջ յանուանէ յիշուած են « Յովստրիայ (Բ. օր. Ալեանկոն), Թորիոս (Ստորիոս) Իսախաթոս, Ալեքիստ, Կոստանդ, Եփեսոս, Ամովս, Սիփոնիոս, Եպիփան, Կղմաս, Եփրեմ, Առաքիոս, Ակակիոս, Սոփոս (Սեփոսոս ըստ Բ. օր.) Որոնի, Սաքիս, (Բ. Սուքիաս) և հետևորն Պապիաս ի մեծին Հռոմայ, որ է հայրապետ հայոց հաւատոյ երկոտասան ազգաց » : Հոս յետ մեծարելոյ զՅովսիմիոս՝ երբ կը բազմին, կը սկսին առարկութիւններ Բորայ և Արարածոց դժուարալոյծ տեղիքներէն, առնո՞ք կ'առարկեն և Յովսիմիոս կը լուծէ. սա կ'առաջարկէ և անոնք կը պարտուին : Կը գրեն ի Հոմա առ Պապն եղելութիւնը, և Յովսիմիոս կը հրաւիրուի անդ, ուր կը պատուի քառասնօրեայ խրախուճով և նաւակատեօք և նմանօրինակ վիճարանութեամբ Հ. և Ն. կտակարանին դժուարին տեղեաց վրայ և կը զարմացնէ զամէնքը : Պապը կը հարցնէ անոր ի՞նչ ազգէ ըլլալն, ուստի՞ գաւն և ո՞ւր երթալը : Հոս կը յայտնէ Յովսիմիոս, թէ. « Ես յԱլեքսանդրեաց եմ և ի ցեղեկ Անուկայ (Բ. օր. Ենեկայ), և կամիմ երթալ յերկիրն երանելիաց » : Գիտնական վարդապետներէն մին՝ Սաքիս (Բ. օր. Սուքիաս), որպէս փորձառու, բերանացի կու տայ անոր այն ճանապարհի ուղեցոյցը, որ առանձին զրուածք մը կը կազմէ : Կ'ընկերեն անոր ամէնքը մինչև « ի գետն Եփրոն » ուր կու տայ արտասուածքն իր վերջին հրաժեշտը, և կը շարունակէ իր ուղեորութիւնը. յորում յաւափոփոխ տեսարաններ՝ կենդանի գոյններով իրարու կը յաջորդեն, որոնք յոյժ կը տարբերին միւս թարգմանութեանց մէջ եղածէն :

Այսպէս նաև ի վերադարձին յԱթէնս՝ դարձեալ հանդիպիլը մի և նոյն վարձկանին, անոր զինքը ճանչնալն և առաջնորդելն առ իշխանս քաղաքին, և Յովսիմիոսի իր տեսած տպաւորութիւնները անոնց պատմելն և զարմացնել, այլովք հանդերձ, շահագրգիռ նորութիւններ են : Խօսքս չերկընցնելու համար ըսած ըլլամ, որ Զոսիմիոսեան համառօտ Զրոյցն՝ այս խմբագրու-

Թեան մէջ ուղեորական բազմադրուագ վիպասանութեան մը կերպարանքը առած է իրօք, և յուժ հրապուրիչ, կրնայ նոյն իսկ գերաստիճանի զարգացումն համարուիլ այն հիմնաւորք Զրուցին: Սակայն հոս իսկ կը պարտաւորիմ դարձեալ կրկնել, թէ այդ դրուագներն, — յատկապէս երկրորդն, — յորում Յովսիփոս առ Պապիւսան կը զրկուի ի Հոռոմ, և հայազգի Միաբարի մը կողմէն յաւելցուած կ'երևի, — պատմական նօրէն քննադատութեան չեն դիմանար, այլ մատենադարկան տեսակէտներով աւելի արժանի են ուսումնասիրաց ուշադրութեան: Ահա այս նպատակով ես ալ տարիներ առաջ պատրաստել էի զանի ի լոյս ընծայելու, հանդերձ ֆրանսերէն թարգմանութեամբ, դիւրամատչելի ընելու համար նաև օտարաց:

ԶԵՌԱԳԻՐՔ. — Անշուշտ ուրիշ օրինակներ ես պիտի գտնուին չ'ըմբանի, Երուսաղէմի և ազգային ուրիշ հաւաքմանց մէջ՝ հայերէն կրկին խմբագրութիւններու, ըստ որում այն գրատուններու Յանկերուն մէջ կը յիշեմ կարգացած ըլլալ իսկ մեր, այսինքն Վենետիկի Ս. Ղազար Վանքի, Գրատան մէջ երեք օրինակներ միայն ունինք, որոնցմէ մէկը, — իբր ներկայացուցիչ համառօտ խմբագրութեան, — արդէն յիշեցինք ի վեր անդր ներածութեանս. իսկ ընդարձակ խմբագրութեան երկու օրինակներ: Առաջինը զոր իբրև հիմն դրած ենք սոյն հրատարակութեան, է Դ. Ծառնտիր (հին թիւ 985), որը թէպէտ և թուական չունի, բայց զրէն, ևն, դատելով ժր-ժի. դարուն գրուած է հաւանօրէն, կիւրեղ զրէն: Ստուար Զեռագրիս բոլոր նիւթերու պարունակութիւնքն և անդրադոյն տեղեկութիւնք տես «Սարգիսեան» — Մայր Յոց. Հայ. Զեռ. Մտեղ. Միւր. Հայց ի Վենետիկ, Հա. Բ. Թ. 203. Թղ. 116բ²—134ա², իսկ երկրորդ B. օրինակը (Հին թիւ 1082) է յիշեալ Մտեղ. Թ. Քարազգիրքը, նոտրագիր մաքուր, բայց սխալագիր: Այս օրինակիս տարբերութիւններ նշանակած ենք ի ստորոտս իջից բնագրին: Կրկին խմբագրութիւններս փո-

խաղարձաբար զիրար կը սրբագրեն ուր որ կը գուզենթանան. և երբեմն մէկուն պակասով միւսը կը լրացնէ, միւսին աւելին ալ մեկալը կը զեղչէ, ինչպէս պիտի տեսնեն ուշիմ ընթերցողք: Բայց վերոյիշեալ դրուագներով ընդարձակ խմբագրութիւնն այնքան կը հեռանայ համառօտէն (այսպէս նաև յոյն և ասորի թարգմանութիւններէն) որ ալ անկարելի է մերձեցման կամ բառացի համեմատութեան կէտ մը անգամ գտնել անոնց միջև: Ի վերջաբանին միայն, — ուր Յովսիփոս կ'աւանդէ իր հոգին, աշակերտները կը թաղեն անոր մարմինը և գերեզմանին վրայ արմաւենիներ կը բուսնին, — ի նշան անոր անարատ վարքին, — կը համաձայնի յունարէն թարգմանութեան:

ԶՈՍԻՄՈՍԵԱՆ ԶՐՈՒՑԻ ՀՆԱԳՈՑՆ ԱՂԻԹԻՐՆԵՐԻՆ. — Վերը յիշատակուած թարգմանութիւններուն մէջ ներածուած իրարմէ աւելի կամ պակաս յաւելուածներէն երկու բան ակներև կը տեսնուին. Ա. Թէ անոնցմէ ոչ մէկը կրնայ հաւատարիմ ներկայացուիչ համարուիլ զօսիմոսեան բուն օրինակին: Բ. Թէ անոնց իւրաքանչիւրին մէջ կան, — իբրարմէ աւելի կամ պակաս իսկական կէտեր, որոնք Զոսիմոսի գրութեան երրայական ակնադրերը կը մատնանշեն մեզ: Այս երկու կէտերէս առաջ նոյն վրայ չենք ուզեր հոս ծանրանալ, որովհետեւ մինչև հիմայ տեղեկագրածներէս արդէն փոքր ի շատէ յայտնի եղաւ. աւելին ուզողները կարող են այն ի լոյս ընծայուած թարգմանութեանց համեմատութիւնէն իսկ ուղղակի իմանալ իսկ երկրորդ կէտի նկատմամբ՝ ասորական և ասոսանագրութիւնն ընդհանրապէս, և Զրուցիս թարգմանութիւնն յատկապէս այնչափ աւելի կարեւոր է, որչափ յունարէն թարգմանութիւնը՝ զօսիմոսեան նախնական յօրինուածութեան համար: Արդ՝ ԺԲ. դարու ասորի նշանաւոր մատենագիր մը՝ Բարեբրես, իր Յաղագս աստեղաբանութեան ճառին մէջ յիշատակելով Երանելեաց (այն է Կանարեանց) կղզիները, որոնց մէջէն կ'անցնէր Պաղոմէդոս իր առաջին միջօրէա-

կանը, կ'ըսէ թէ անոր բնակիչներն Ռեքարեաննու յաջորդներ էին, կ'ապրէին մովսիսական օրինօք, և թէ իրենց մահուանէն ետքը անմիջապէս երկիրը կը մշտնէին: Դիտելով որ այսպիսի բացատրութիւն մը, այսինքն՝ առանց հաւատոց բանին մարդեղութեան, անյարմար է քրիստոնեայ մատենագրին բերանը. կը հետևի որ Բար-Երրեսոսի ծանօթ էր Ռեքարեաններուն վերաբերեալ զրոյցի երրայական սկզբնագիրը և կամ անոր շատ մօտ ուրիշ անվաներ գրուած մը. և թէ ինքն անոր հաւատարիմ գտնուելու համար՝ զանի նոյնութեամբ մէջ բերած է: Այս բանիս հաւաստիքը կ'ընծայէ մեզ ասորի աւելի հին հեղինակ մը, այն է Յակոբ Եղեսացին. սա է. դարուն յունարէնը՝ ասորերէնի փոխած ժամանակ նկատելով սակայն այն տեղւոյ անյարմարութիւնը, ստիպուած կը զգար ինքզինքը՝ հետեւեալ մեկնաբանական յաւելուածը ներմուծել հոն, զնկելով զանի Ռեքարեաններու բերանը. « Հրեշտակ մեր եցոյց մեզ զմարմնեալ քանիև Աստուծոյ ի Կոյսն Մարիամ, որ ծնաւ զԱստուծ. և զամենայն զոր ինչ արար և կրեաց նա վասն փրկութեան մահկանացոյաց. Մեր երկիր պազանեմք նա, խոստովանիմք և զովմեր զնա, վասն այնր զոր արար յիտ մարմնեալոյն իորոյ »: Այսպիսի խոշոր

փոփոխութեամբ Յակոբ Եղեսացին՝ կամ Զոսիմոսը ուզած է անբասիր առնել. և կամ ճանչցած է Ռեքարեաններուն վերաբերեալ Քրիստոսի թուականին Ա-Բ. դարում և քրիստոնէական զաղափարներով տողորուած հրէի մը անվաներ գրուածը այսինքն՝ Պաշար Մատթէի, և կամ Յայուկոսիան Պիտրոսի, երկուքն ևս թարգմանուած ետքէն եթովպացերէն և արապերէն լեզուներով. որոնք փոխադարձաբար ունեցած են իբրև հասարակաց աղբիւր Պատմութիւն Կորնտնեայ ցեղերու կոչուած եբրայեցերէն կամ արամէական սկզբնագիրը:

Այս սեսակետով շատ զնահատելի ծառայութիւն մատուցած է մեզ Կոմմոդիան Գազացի. Բերթոլդոս՝ որ կ'ապրէր քրիստոնեական թուականով շուրջ 249ին, իր *Instructiones contra gentium deos* և *Carmen Apologeticum* խորագրած կըրկին քերթուածներուն մէջ պահած է երկու նկարագեղ հատուածներ, որոնք ինչ ինչ կ'ետերով մէկ կողմէն կը բնորոշեն եբրայական սկզբնագիրը, և միւս կողմէն ալ կը բանան մեզ Զոսիմոսեան անոր վրայ յերևուած խմբագրութեան պատրուակը: Կոմմոդիանու յիշեալ քերթուածները որովհետև ամենուն զիրարմատելի չեն, այն պատճառաւ կ'ուզենք զնեկ հոս զանոնք, ըստ հրատարակութեան Դոմբարտեայ.

1. (a) Instr. II. 1. DE POPULO ABSCONSO SANCTO OMNIPOTENTIS CHRISTI DEI VIVI.

« Desidet [populus] absconsus ultimus sanctus,
Et quidem ignotus a nobis ubi moretur.
Per novem tribuum <cum> agant et dimidiam ipsi
Omissae duae tribuum haec sunt et dimidia nobis.
... illa est gens vera caelestis.
Non natus ante patrem moritur ibi, neque dolores
In suis corporibus sentiunt vel ulcera nata.
Pausantes in lecto suo mature recedunt
Omnia complentes legis, ideoque tutantur ».

(b) CARMEN APOLOGETICUM 941 Sqq.

Tunc Deus omnipotens, terminet ut cuncta, quae dixi,
Producet populum tempore multo.

Sunt autem Iudaei trans Persida flumine clausi
Quos usque in finem voluit Deus ibi morari

945 Captivitas illos ibidem redegit ut essent;
Ex duodena tribu nove <m> semis ibi morantur.

Mendacium ibi non est neque odium ullum;

Idcirco nec moritur filius suos ante parentes;

Nec mortuos plangunt nec legunt more de nostro,

950 *Expectant quoniam resurrectionem futuram.*

Non animam ullam vescuntur additis escis,

Sed olera tantum, quod sit sine sanguine fuso.

Iustitia pleni inlibato corpore vivunt,

In illis nec genesis exercet impia vires,

955 *Non febres accedunt in illis, non frigora saeva,*

Obtemperant quoniam universa candide legis;

Quae nos et ipsi sequemur pure viventis;

Mors tantum aderat et labor, nam cetera surda ».

Արդ՝ կոմսոդիանու նոտարագրուած տո-
ղերուն և Զոսիմոսի միջև եղած աղերսը, —
գէթ Երանեկեաց երկրի բնակիչներուն կեն-
ցադի նկատմամբ, — է գրէթէ բառացի և
առանց երկրայութեան: Եւ որովհետեւ կոմ-
սոդիան մէջ ու կէս դար յառաջ գրած է
իւր յիշեալ տողերը. բնականաբար կը հե-
տեւի, որ նա երբայական բնագրէ մը փոխ
առած ըլլայ զանոնք: Այս բանիս ահն
յայտնի հաւաստիքն արդէն տուած է մեզ
զազացի քերթողն, երկիցս շեշտելով ինն
և կէս ցեղերը, ըսելով թէ անոնք «Հրեա-
ներ էին և յայնկոյս Պարսկական գետին
փոխուած. զորոնք ուզեց Աստուած որ
ծածկուած մնան հոն մինչև ի կատարած
աշխարհի»: Պատմական ակնարկութիւն
մ'է այս, որուն հետքն անգամ չի զրտ-
նուիր Զոսիմոսի մեզ ծանօթ յունարէն
խմբագրութեան մէջ, Գուցէ առարկող ըլ-
լայ, թէ կոմսոդիան Երեմիայի մարգա-
րութեան լէ. գլխէն և Ա. Մնացորդացէն
ներշնչուած՝ գրեր է յիշեալ երկու հա-

տուածները: Առ որ զիտել կու տամ, որ այս
գիրքերէն ոչ մէկուն և ոչ ալ միւսին մէջ
կը գտնուին բնաւ նոտարագրուած տողերն
իրենց մանրամասնութիւններով. հետեա-
բար նա ինն և կէս, այսինքն կորսուած ցե-
ղերու Պատմութեան երբայական բնագիրն
ունեցեր է իւր աշրին առջև, որը դժբախ-
տօրէն թէպէտեւ անյայտացած է, սակայն
և այնպէս թողած է իրեն-իրը մասնական
և անկատար ներկայացուցիչներ-եթովպա-
րէն լեզուով գրուած մէկէն աւելի անվա-
ւեր գրութիւններ, զորոնք ի վեր անդը
յիշատակեցինք. Լրմ. Ռորինսըն արդէն ծա-
նօթացուցած է զայս գիտնոց՝ թէ՛ Զոսիմոսի
յուն. թարգ. հրատ. Ներածութեան մէջ
և թէ՛ նոյն անվաւեր գրոց վրայ ըրած
առանձին ուսումնասիրութիւններով: Իսկ
ես կ'ուզեմ հոս կոմսոդիանէն աւելի հնա-
գոյն հեղինակի մը վրայ դարձնել ուսում-
նասիրաց ուշադրութիւնը, որ Անգղիացի
քննադատին աչքէն վրիպած է:

Փիլոն երբայեցի, — ծնած յամին 30

նախ քան զՔրիստոս, և մեռած 45ին յ. Քրիստոսի, — իւր ալլաբանական ճառերէն առաջնոյն մէջ, որ կը կրէ՝ ըստ հայերէն թարգմանութեան¹. Յոդագր Հեախանց, կե-
նաց վարդապետ իմաստեաց խորագիրը, այն-
պէս կը նկարագրէ Մարեայ լճին² վերև
առանձնացած այս հրաշալի ընտրեալներուն
անսովոր կենցաղը, ինչպէս Զոսիմոս նկա-
րագրած է Երանեկեաց երկրին, այն է Ռե-
քարեաններունը։ Նմանութիւնն ըստ ամե-
նայնի կատարեալ է։ Անոնք, ալ ըստ Փի-
լոնի, աշխարհէ քաշուած՝ ճգնդակաւն և
տեսական կեանք կը վարէին, միայն յար-
կածածուկ տաղաւարներու տակ կը բնա-
կէին, իրարմէ զատուած։ Մովսիսական
օրինոց կ'ապրէին. սպիտակ կտակներ միայն
կը զգնուէին. միս բնաւ չէին ուտեր, գի-
նի չէին ըմպեր. զիշեր ցորէի Ս. Գիրքը
կարդալով, սակնեղով և ժողածելով կ'ան-
ցունէին. աստուածային հայեցողութիւն-
ներով անդադար հոգին և միտքը բարձ-
րացնելու և սրբացնելու միայն կը ճգնէին։
Եօթնեկին մէջ մէկ կամ երկու անգամ
իմիսին կը համախմբէին՝ հանդիսաւոր
կերպով և օրհներգութեամբ զԱստուած
փառաբանելու համար, և պարկեշտագոյն
խնջոցով և պարերով կը ցնծային։ Հե-
թանոս և Քրիստոսնայ Նին մատենագիրը
Փլինիոսէն սկսեալ զանոնք իբրև ճակա-
տագրական ազանդաւորներ և առ հասա-
րակ ամուրիներ նկատած են. և անոնց
ծագումն ալ մինչև Մակարայեցւոց ժա-
մանակը վեր կը հանեն։ Սակայն Փիլոն
կը թուի հերքել այս բաներս, վասն զի
ոչ միայն կը յիշէ անոնց մէջ ծերեր և
տղաքներ, այլ և պառաններ և աղջիկներ.
ոչ միայն մեծապէս կը դրուատէ և վեր
կը բարձրացնէ անոնց իմաստութիւնն և
աստուածաշնորհութիւնը՝ քան զիմաստունս

Հելլենացւոց, ըսելով. «Էլ միում միում
իւրաքանչիւր ումք է տէրունեան տեսկ,
որ կոչի պարկեշտաւոց և միայնարան. յո-
րում միայնալով նոքա՝ զպարկեշտ և զնա-
զելի վարուց զխորհուրդան կատարեն։ Ո-
չինչ ի ներք տանելով, ոչ ըմպելի՝ ոչ
կերակուր, և ոչինչ մի յայնցանէ որ միան-
գամ առ ի մարմնոյն պէտս են հարկա-
ւորք. այլ աւրէնս և պատգամս յաստու-
ծոյ տուեալ ի ձեռն մարգարէիցն, և երգս
աւրհնութեան, և զայլսն որովք հոնճար
և բարեպաշտութիւն առ հասարակ աճեն
և կատարին»։

Դարձեալ՝ Փիլոն իւր ճառին սկիզբը
կը յայտարարէ, թէ ինքն ըստ ըմաց չէ
որ կը նկարագրէ անոնց կենցաղը. այլ
«կարգաւ պատմութեան զհետ անցանելով
զարժանաւորան ասացից։ Ոչինչ ընդոստ
առ ի զարդարել և լաւ երեցեցանել յա-
ւելեալ»։ Իսկ յէջ 13 այդ զրաւոր պատ-
մութիւնը կ'որակէ այսպէս. «Բայց է սո-
ցա և շարագրածք հին արաւց, որք ողաւ-
դին առաջնորդք և սկիզբն եղեն, յագում
յիշատակարանս այնր որ յայրաբանեալսն
տեսակի բողին. որովք սկզբնատպար
վա-
րելով նորս, նմանորին թերեւ զկամոցն
եղեց զարիւնակ»։ Հեսսենաց (Esseniens)
մասին շատ բաներ գրուած են և շատ
վարկածներ ըրած պատմիչք, բայց ա-
նոնցմէ ոչ մէկն ստոյգ է և վճռական. Բա-
նասէրներէն ոմանք ասորի hassana բա-
ռէն ծագած կը համարին, որ կը նշանակէ
ժողովալ կամ կրող։ Ըստ իս այդ աղան-
դաւորները կամ ժողովալք՝ Քրիստոսի ժա-
մանակ չեն կրնար ծագած ըլլալ և ոչ իսկ
Մակարայեցւոց, այլ հաւանորէն Քրիստո-
սէ վեց դար յառաջ, և Ռեքարեան Յով-
նադարի հեռաւոր յաջորդները՝ կարող են
ըլլալ. որովհետև Երեմիա մարգարէէն (զլ.

1. Տես Փիլոնի Երապիցեոյ ճառք, ԹԿ. ի Վնետիկ
1892, չափ Լ. եր. 5-82։

2. Ուրիշ հեղինակներ ալ Մեռեալ ծովին եզերքը կը
դնեն անոնց բնակութիւնը, որը հաւանական չերենար
ինձ. վասն զի ի՞նչ այսպէս ըլլար, Զոսիմոս չպիտի
կարենար երևակայել անծանօթ ուղիներուն և անա-
պատները։

3. Ի՞նչ ստոյգ է նկարագրութիւնս, կը հետի, թէ ան-
կարելի է որ ժողովուրդ մը կարենար յարասեւել վեց
դար առանց ամուսնութեան. ուստի այս տեսակետով Զո-
սիմոս աւելի բանաւոր է, որ կը չեղտէ բացորոշակի Ե-
րանեկեաց երկրի բնակիչներու ամուսնութիւնն և առաջին
մեքսաւորութիւնը, և թէ անկէ ետք ժողովուրդեամբ
կ'անցնէին՝ որպէս ամուսնի։

ԼԷ.) անոնց մասին տուած հակիրճ տեղեկութեան շատ լաւ կը համաձայնի ֆիւլոնի ընդարձակ նկարագրերը: Եւ որովհետեւ սա կը ծանուցանէ թէ անոնց վերաբերեալ հին արտեղ շարագրածն կամ պատմութենէն քաղած է էական բաները. ուստի ես կարծեմ թէ ճշմարտութեան հակառակ խորհած չենք ըլլար, եթէ ըսենք, թէ այդ շարագրածն էր կորուսեալ ցեղերու պատմութիւնը, ուսկէ օգտուեցաւ նաեւ Զոսի-

մոս: Ապագայ վերայայտնութիւնն երբայական բնագրին ուշ կամ շուտ պիտի պարզէ ամէն բան:

Արդէն ըստ բաւականի գրած եւ վիճած են քննադատը զոսիմոսեան Զրուցի վրայ. սակայն ես ապահով եմ, որ հայերէն խումբագրութեան հրատարակութիւնը՝ վերստին գրել եւ վիճել պիտի տայ անոնց:

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԼԵԶՈՒ ՍՈՒՏ ԶԱՐԴ ԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՆ

Այլ որ հայել իջեցեք սի՛րտ ապտում՝
Յարեազանգ աղիս քո տան հայրենի,
Վրէժ քեզ կարգան ամայացեալ զերդաստանը,
Պարկեշտ կուսանը, հարսունը, փեսայը, որբը, տղիք,
Վրէժ քեզ անհաշտ օգառանին լեռնականը,
Վրէժ աբխազած անարօր դաշտը հայրենիք...

Երեակայեցէք երբ մարդ ուրախ սրտով եւ անհոգ՝ կանաչ մարգագետնի մէջ շրջագայած ժամանակ, յանկարծ դալարներու միջէն բարձրացող խփ զուլիւր տեսնայ, ինչ զայրոյթը կը մղէ զինք մի գաւազանի հարուածով՝ գազտնասող թշնամիին վրէժն լուծել: Նոյն ազդեցութիւնն ներգործեց, «Տաճար»-ի հրատարակած «Հայ յեղափոխ. կուսակցութիւններ» զրբին ընթերցումն:

Հայի բիւրաւոր տառապանքներէն ետեւ, յուսոյ եւ մխիթարութեան կանաչ յոյսն պարզուեր էր մեր աչքի առաջ եւ մենք կը զուարճանայինք մտքով ման գալով այն սարերն ու ձորերն, այն երկար ճանապարհներն ու անապատներն, ուր տանջուեցան եւ ինկան մեր ամեն տարիքի եւ հասակի նահատակներն: Թուրք մեզի կենդանացած կը թուէին իրենց բոսորագեղ արեան մէջ, բոլորն մեզի անուշարոյր անթառամ ծաղիկներ էին:

Մեզի համար անշունչ արարածներն անգամ լեզու ելեր էին:

Մենք անձկանօք կ'երեակայէինք մեր

հայրենիքի վերաշինութիւնն միաշունչ, միախորհուրդ, համերաշխ գործակցութեամբ. մենք համոզուած էինք թէ Հայ ազգն 1915ի բովէն զտուած մաքուր ծոյլ դուրս եկել էր. բայց շատ խարուած էինք. «Տաճար»-ի հրատարակութիւնն այդ սփոփիչ մարգագետնի մէջ սողացող իժն երեցաւ, որ ծնունդ էր թուրք օձերուն:

Թուրքն գիտակից իր գործած քստմեկի ոճիրներուն, ապագայ դատաստանի երկուղէն, ըստ ընածին բարուց, առտ զըրպարտութիւններով, հանդէս եկեր է հայ յեղափոխական կուսակցութիւններու կամ թէ Հայ ազգի վզին փաթթելու բոլոր ոճիրներու պատասխանատուութիւնն:

Մենք չենք զարմանար թուրքի պաճարամիտ մտայնութեան վրայ, այլ կը ցախնք մեծապէս «Տաճար»-ի անիմաստ նախանձայուգութեանը համար, որ դեռ 1915ի Հայրենիքի մեծ աղէտներուց յետոյ, ստոր կուսակցական կրքերով լցուած, ոճրագործ, հրէշ խտրիհատականներու դատը ելեր է պաշտպանելու. մարդասպան վոհմակին հայ արիւնով ժանգոտած սուրը դեռ կը փորձէ սրբել եւ սրել ի վնաս հայկական դատին: Եթէ այդ թարգմանութեամբ՝ իբրեւ փաստաթուղթ թուրքի մտայնութեան, ուզած է հասկնալի ընել տալ հայ հասա-